

կայս¹ թագաւորացն եւ² քահանայապետացն³, բղխեցին Յայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ: 4 Անդ էր յիշելի եւ մարգարեականն, եթէ՝ *Եղիցի անդ աղբիւր բղխեալ ի տան Դաւթի*^ա:

5 Որ եւ սկսան իսկ սիւնք եկեղեցւոյ միջամուխ ձեռամբ⁴ զգործ աւետարանչացն⁵ Զրիստոսի գործել, գումարել ի կողմանս. ի գաւառս, ի տեղիս տեղիս Յայաստան ազգին, դասս դասս⁶ զաշակերտեալսն ճմարտութեանն, զհասուցելոցս⁷ ի կատարումն գիտութեան⁸, բաւականս⁹ եւ առ ի զայլսն զեկուցանելոյ: 6 Որոց¹⁰ կանոն եւ արիւնակ զիւրեանց անձանց արգասիս եղեալ, եւ պատուիրեալ կալ ի նմին կանոնի:

7 Եւ իւրեանց անդէն¹¹ զ՝առջնութեակաց արքունիսն¹², հանդերձ ամենայն ազատագունդ բանակին¹³, աստուածեղէն իմաստութեամբն վարդապետեալ: 8 Առաւել երանելոյն¹⁴ Սահակայ զՄամիկոնեան¹⁵ որեարն ի վարժս վարդապետութեանն¹⁶ պարապեցուցեալ, որոց առաջնոյն Վարդան անուն էր¹⁷, որ եւ Վարդկան¹⁸ կոչէր: 9 Նոյնպէս եւ զամենայն ոգի ջանայր¹⁹ յերկրել, հասուցանել ի գիտութիւն²⁰ ճմարտութեան:

[ԺԳ]

1 Յետ այնորիկ առնոյր հաւանութիւն երանելին Մաշթօց, որպէս զի²¹ տէր²² Եպիսկոպոսն ի կայենականսն, եւ նա ի սփիւռս հեթանոսաց զբանն

1 *b* ի կաս

2 *e չիք* եւ

3 *d* քահանայապետիցն

ա Յմմտ. Չաբ. ԺԳ 1:

4 *bc* ի միամուխ ձեռամբ

5 *b* աւետարանչաց

6 *bcվ* դասս դասս / *միւսն*. դասս դասս

7 *c* զհասուցելոցն

8 *b* գիտութեանցն

9 *bc* բաւականս

10 *d* որոյ

11 *bcd* անդրէն

12 *bc* արգունսն *փիւ*. արքունիսն

13 *bc* բանակին

14 *d* երանելոյն / *միւսն*. երանելոյն

15 *b* Մամիկոնեան

16 *d* վարդապետութեան

17 *bc* որոյ առաջնոյն Վարդ կոչիւր *փիւ*. որոց առաջնոյն Վարդան անուն էր

18 *b* Վարդական / *cd* Վարդան *փիւ*. Վարդկան

19 *bc* ջանալ

20 *b* ի գիտութիւնն

21 *d* որպէս *փիւ*. որպէսզի

22 *bc* տէրն